

ՀՐԻՇԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Համազգային խոր սուպի այս ամիսներին, Մենք էլ, շատ-շատերի պես, Արևմտյան Հաստանի քաղաքներին ու գյուղերին և առասարակ Փոքր Ասիայի հայաշատ կամ հարբանակ վայրերին նվիրված հուշամատյան-ներին դիմեցինք, ամբողջական ու լրիվ գաղափար կազմելու համար մասնավորապես մեծ եղեռնի առթիվ մեր կրած երաժշտական կորուսաների մասին: Ու չնայած, որ նախապես էլ գիտեինք, թե վայրենի թաթը մեծ ավեր էր գործել նաև հայոց երաժշտական մշակույթի անդաստաններում (հիշենք թեկուզ և միայն Կոմիտաս վարդապետի կյանքի ողբերգական ուղին, նրա 20-ամյա ամլությունն ու շիրագործված ծրագրերը), հայոց հետեւ հավաքված նյութը միանգամայն գերազանցեց սպասվածը: Արդարեւ, շատ ծանր են երաժշտական մեր կորուստները: Պատմական որոշակի մեկ ժամանակամիջոցի առումով, ուղղակի կասեցվեց հայկական երաժշտական մշակույթի փայլուն առաջընթացը (վերջինիս լավագույն ցուցիչներից են հանդիսացել, 1912—1914 թվականներին, հայոց գրերի գյուտի 1500-ամյակի կապակցությամբ, մինչև իսկ հայկական գյուղերում կազմակերպված, և իրենց մակարդակով անմիջական շրջապատից վեր բարձրացած, երգահանդեսներն ու նվագահանդեսները): Պարզվում է, որ մենք կորցրել ենք՝ ա) երաժշտապահագրական հսկայածավալ մեկ միջավայր ու վիթխարի քանակությամբ նյութեր (շմոռանանք, որ եղեռնից առաջ, հայկական երաժշտական աղքագրությունը գեռ նոր-նոր էր միայն գրվում գիտական հիմքերի վրա). բ) երաժշտական բազմապիսի շեն օջախներ (հոգեոր երգարվեստի հինավորց ավանդույթներով օծուն վանական ուսումնարաններ, երգ-երաժշտության դասավանդումը պատշաճ բարձրության վրա պահող

հայկական աշխարհիկ կրթարաններ և հայուսանող երիտասարդությունը ուսուական և եվրոպական երաժշտությանը հաղորդակից դարձնող օտար բազմաթիվ վարժարաններ՝ կոլեջներ): գ) ինչպես նաև շատ տաղանդավոր աշուղներ, երգիչներ, ու եվրոպայում երաժշտական բարձրագույն կրթություն ստացած պրոֆեսիոնալ հիմնալի գործիչներ:

Քսամնելի էր ապրիլյան եղեռնը: Վայրենի թաթը իր ճիրանները մեկնում էր մեր հոգեոր հարստություններին ևս: «Աքսորելոց տունն ու կայքն ավարել հիմնովին,— գրում էր գեռնս Հ. Հ. Տաշյանը,— ... քանդել եկեղեցիներն ու ամեն հաստատություններն, նաև դարավոր պատմական շինվածքները, որոննել ամեն շինություն ու քար՝ հայ արձանագրություններ իսկ շնչելու համար, նոյնիսկ պարզ գերեզմանաբարեր շթողով իրենց տեղն անխախտ, հայության որևէ հետք շնչելու համար, շխոսելով գրավոր և այլ հիշատակարանաց փացման մասին. այս ամենն ալ թեև անծանոթ շեն օսմանյան պետության, բայց նոր են իրենց միահամուռ ամբողջությամբ և ավելի և իրենց նպատակավը»<sup>1</sup>: Դժբախտաբար մինչև այժմ իսկ շարունակվում է ռանցյալը վերագնահատելու այս եղանակը, որին միանում են մեր հոգեոր հարստությունների մի մասն էլ սեփականացնել ու տիսուր մտահղացումների նկատի ունենալով հատկապես երաժշտության բնագավառը, այստեղ անհրաժեշտ է նշել գեթ հետեւալը: Ժողովրդական տիպի բազմահարյուր գողտրիկ երգեր կան («մանիս-ներ, «ալե-կողլուս-ներ և այլն), որոնք հողինված են Կիլիկիայի կամ Սև Սովի ավաղանի, Փոքր Հայքի

<sup>1</sup> Տաշյան Հ. Հ., «Հայ ազգի տարագրությունը գերանական վավերագիրներու համեմատ», Վիեննա, 1921, էջ 3:

թե Կուտինայի կամ Աֆիոն-Գարաջիսարի թրքախոս Հայերի կողմից, և որոնք, հենց թուրքերեն լինելու ու նաև որևէ անհատ հեղինակի անվանը կապված Ահնելու պատճառով՝ «անարգել» կերպով սեփականացվում են այժմ, ինչքան էլ մեզ զգուշացրած լինեն այդ մասին ավագ սերնդի մեր մտավորականները<sup>3</sup>: Այնուեետև, սեփականացվում են նաև թուրքերենով երգած ու հորինած արևմտահայ աշուղների տաղանդավոր ստեղծագործությունները, որոնք, ի դեպ, վաղուց իվեր խնամքով հավաքվելիս են եղել առանձին անհատների կողմից, ինչպես այդ մասին մի թանկագին վկայություն է տալիս Ս. Տյովլեթյանը, մատնացուց անելով Հայ աշուղ Սելյահից շատ երգեր գրի առած բանաւելզ Մեհմեդ Էմին Բեյին<sup>4</sup>: Երբեմն բոլորովին անալզմով «սխրագործություններ» են կատարվում, որոնցից մեկի արդյունքն այն է, որինակ, որ Բարա Համբարձում կիմոնցանի Հնարած Հայկական ձայնագրության նոր դրությունը ... գերմանացի գիտնականներ Ուորերտ Լախմանի ու նրանից օգտված Յուհաննես Վոլֆի աշխատություններում բերվում է որպես նոտագրության ... թուրքական սիստեմ<sup>5</sup>: Երբեմն էլ պարզապես աղջակողմի սանձարձակություն է ի գործ դրվում, ինչպես, որինակ, ոմն Հալիդէ Էդիրի կասկածելի հուշերա-ի հրատարակությունը տենի Խսթամբուկը թերթում, որոնցում (հուշերում) նոսվում է Կոմիտասի ... թուրք լինելու կամ նրա թրքական ծագման մասին<sup>6</sup>: Այս բոլորը ուկ քմծիծաղ առաջ կբերեին, եթե միայն, ալելի քաղաքակրթված մի ժողովուրդ բարբառուաբար բնաջնջելուց ու ճակտի արդար օրտինքով նրա վաստակածը թալանելուց հետո, հոգեոր հարստություններն էլ կողուստերու նախորդը մշակված ծրագրերի իրագործան արտահայտությունները յինքենի:

<sup>2</sup> Տ. Ն., «Հակոբոս Այվազյան երաժշտական» Փարիզ, 1958, էջ 89, ուր իրավամբ գրված է. «Այսպահ երաժշտականին կմնայ լուծել երաժշտական երանոները՝ ճշտելու համար Անդորրու կոչված երկրամասին ժողովուրդներն յուրաքանչյուրին նպաստը, առանց խարսխություն բառերուն ազգութեաննեն»:

<sup>3</sup> Տյովլիքը ան Ա., «Հուշեր Շապին-Գարանիսարեն», Փարիզ, 1954, է, 57—59,

<sup>4</sup> „Tonschriften der Araber, Perser und Türker“  
u. b. Johannes Wolf, „Die Tonschriften“, Breslau,  
1924. Lfg. 18—24.

Եղենո՞ւ յուրօրիխնակ հատուցումը եղավ այն  
բոլոր օգտակար ծառայությանց, որ արե-  
մրտահայերը մատուցեցին օսմանյան պետու-  
թյան, ինչպես երկրագործության և արհեստ-  
ների, արդյունաբերության և ազատ ար-  
վեստների<sup>6</sup>, այնպես էլ երաժշտության բնա-  
գավառում։ Ընդհանրապես հայտնի է, թե  
ի՞նչպիսի ակնառու գեր են խաղացել պոլսա-  
հայերը, ի դեմս մի ամբողջ շարք լուսավոր-  
յալ երաժշտների՝ վաղամեռիկ Գարբիել Ե-  
րանյանից<sup>7</sup>։ Մինչև մեծատաղանդ Տիգրան  
Չոփացյանը<sup>8</sup>, Թուրքիան Արևմտյան Եվրո-  
պայի երաժշտական նվաճումներին հաղոր-  
դակից դարձնելու գործում, մի բան, որ կա-  
մա թե ակամա ընդունվում է թուրք երա-  
ժիշտ-պատմաբանների կողմից ևս<sup>9</sup>. Իր տա-  
րողությամբ շատ ավելի մեծ է Թուրքիայում  
հենց արևելյան երաժշտության ավանդույթ-  
ների զարգացման գործին հայոց բերած  
մասնակցությունը։ Հայերը իրենց բարձր ե-  
րաժշտականությամբ դեռևս խոր միջնադա-  
րում մեծապես նպաստել են վաշկատուն  
կյանքով ապրող թուրք եկվոր ցեղերի ե-  
րաժշտական հակումների զարգացմանը,  
հենց միայն մոտավոր՝ հարևանի բնական  
ագդեցության ուժովն իսկ<sup>10</sup>։ Ավելի ուշ, օս-

<sup>6</sup> *Sb' Ա Ոզպանյան Ա.*, «Ժմանակակից Հայաստանի առարկայալը Ն. վ. Մշրտիչ», «Անահիտ», Փարփա, 1907, № 1,էջ 18; *Sb' Ա նաև Գեղրդ Մերով, «Հայերը արվեստներու տարածիլ», «Հայունիթը», Բուստին, 1925, մայիս, էջ 69—70:*

<sup>7</sup> Пп. 4 «Исаариякакиан եռանդում, հանրօգուտ իր գործունեությամբ վաստակեց և վրապական երաժշտությունը Պոլսում տառաշին ծաղկեցնողա-ի Համբավը, Տե՛ս «Եվրոպական երաժշտությունն ի Պոլսի առաջին ծաղկեցնողը», Թէսոդիկ, «Ամենուն Տարեցուցը», Կ. Պոլիս, 1916—1920, էջ 89—90:

<sup>8</sup> Որ Հանդիսացավ Պոլսում օպերա-օպերետի հիմնագիրը և, առհասարակ, արևելյան երաժշտության մշակուողական տեխնոլոգիան վարպետորեն օփուազործած առաջին (իսկ Փուրբիայի համար նաև միջև այժմ ինկանոներազանցելի) կոմպոզիտորը: *Տիգրան Տիգրանով*, 1956, էջ 144.

<sup>9</sup> См. Махмуд Рагиб, «Западно-Европейская музыка в Турции», «Советская музыка», 1933, № 6, стр. 136—141.

<sup>10</sup> Երաժշտական արվեստի բնագավառում հայ-թրքական ալապի փոխ-հարաբերութիւնց գոյացման համար կային նպաստավոր պամաններ Հայկական և Թուրքական (սկզբնապես Թուրքանական) միաձայնությունը խարսխվում էր ակուստիկական միանույն դրության վրա; և շատ ընդհանուր կողմեր ուներ, ինչպես լադային հմարի, այնպես էլ, որոշ շափով, որիթե՛ ինտոնացիոն գրառապաշարութիւններուն է ենու համակետից: Այլ բան է, թե սկզբունքը ևնք զգայի տարրենությունն է ենու համակետից:

հանյան պետության հղորացումից հետո, վալթանական դաժան լծի տակ, Կիլիկիայի և ուր Ասիայի հայկական գաղութների բնակչության մեկ մասը այնպես էլ չկարողացավ ահազանել մայրենի լեզուն, և իր ավանդան բանահյուսությունն իսկ, հետզետե արգմանելով, սկսեց զարգացնել թուրքերենի հիման վրա, այսպիսով դարերով կուտակված գեղագիտական իր արժեքներն ու նամակն ընդունությունները, կամա թե նկամա, ծառայեցնելով թուրքական մշակույթի ծաղկմանը<sup>11</sup>: Հար և նման ճակատագիր և նեցավ նաև արևմտահայ աշուղների ողջ ամաստեղությունը, որ նույն ծառայությունը հատուցեց Թուրքիային<sup>12</sup>, հասկանալի է, աւելի լայն շափացույցներով ու ավելի բարձր ժակարդակով, իր վրա հրավիրելով պալա-

թրաժշտական արվեստի և թրթական բռչոր ցեղենի որդի կրածության միջև՝ գեղագիտական խորի առողջությունը, որ և զնալով մեծացել է, ի վերջո վերածվելով ապահան ու պարագի: Գեղագիտական թուրքան-թուրքական բրոնզումը, ոչ մի բան չմոռանալով, և ոչ մի բան շորուցնելով այս նոր միջավայրում, անվերջ իրն է պարտադրել շրջապատին, իսկ հայկականը հետզետե փոքր պատահի մեջ ամփոփելով դիմագրել է, մինչ Կոմիտասի գործունեության փրկարար շրջանը, նորից պատրաստ աշխարհ զալով տարածվելու համար և վահական զալում գիտենք, թե մեր երաժշտությունը շատ ավելի զուսպ է, լուրջ զգաստ և իր արտահայտությունների մեջ չափավոր, ներքնապես լցված, հագեցած ու հարուստ լինելով հանգերձ: Այս հարազատ արտացոլումն է հայկական բարձրավանդակի բազմապիսի զեղեցկությանց, մինչ թուրքականի մեջ զեր այժմ իսկ թուրքան տափաստանների շունչն է իշխում: Ետք ճիշտ է, եթե ասվում է, թե «... ամսն մողավորդ չի կրնար հաղորդականանալ այն հողերուն հետ, որոնց վրա կրտսելի» (Ը. Ն., «Կոմիտաս և իր արևմտական գիտականություն», «Անդաման», Փարիզ, 1955, № 5, էջ 34):

<sup>11</sup> Այս կապակցությամբ պիտի շեշտել, որ հայոց կողմէց թուրքերնով հորինված (մասամբ հայերենից թարգմանված և մասամբ էլ նորաստեղծ) ժողովրական տիպի երգերից շատերը իրենց գեղագիտական խորով ու երաժշտական բաղկացուցիչով զուտ հայցի են, և մենք այժմ պարտավոր ենք տարրերել դրանք, որոշելով դրանց առանձնահատկությունները: մնացած նկատմամբ սրելով լոկ հեղինակային պատկանելության (հավաքական իմաստով) հարցը:

<sup>12</sup> Այստեղ նույնպես պարտավոր ենք տարբերել թուրքերնով հորինված աշուղական բազմաթիվ այն երգերը, որոնք իրենց խորով քրիստոնեական են և հայացի, իրենց բնույթով պարզապես թուրքական արվեստին պատկանող ստեղծագործություններից, շեշտելով վերջիններիս հեղինակային պատկանելության հարցը:

տական շրջանների իսկ հատուկ ուշադրությունը<sup>13</sup>: Աշուղներից պակաս օգտակար չեն եղել նաև արևելյան երաժշտության ասպարեզում փայլած հայ վիրտուոզ կատարողները՝ երգիչները («Հանենդե») և մանավանդնվագածուները («սազենդե»): Դեռևս Ժի դարի առաջին կեսում նշանավոր է եղել սովորական մարդու թամբուլ Ա. Ի. (1736—1756) պալատական նվագածու թամբուրի Հարութինը<sup>14</sup>: Իսկ հաջորդ, Ժի դարում և սույն հարյուրամյակի սկզբում, հայ անվանի կատարողները պարզապես ողղողել են Պոլիսն ու Թուրքիայի մյուս բաղաբները: Նրանցից շատերը, ինչպես ներքյան Զենոր, Թամբուրի Ալեքսան, Հանենդե Նիկողոս, Աշազուրի Սեպուհ, Զիյորջյան Գրիգոր, Գուլզունճուրից անընդության Հարություն, Հանենդե Աստիկ, Քեմանի Թադեոս, Քանունի Համբարձում, Քեմանի Նիկողոս, Սազենդե Արշակ և ուրիշներ, մեծ հոշակ են վայելել, ու վաշաների և սովորանների կողմից իսկ մեծամեծ պատիվների են արժանացել<sup>15</sup>: Ինչպես այժմ պարզվում է, հայ երաժշտները զգալի աշխատանք են տարել նաև պրոֆեսիոնալ երաժշտության այնպիսի ժանրերի զարգացման մեջ, ինչպիսիք են՝ «շարքի», «սեմայի», «բեսպե», «փեշըքի» և այլ ձեռքր: Մասնավորապես պարզվում է, որ այս բնագավառում բեղմնավորապես աշխատել են, բացի վերոհիշյալ կատարող-երաժիշտներից, նաև Բարա Համբարձում Լիմոնջյանը, Համբարձում Զերշանը, Լեռն Խանջյանը, Հակոբոս Այվազյանը և ուրիշներ<sup>16</sup>: Վերջապես հայ բարձրավանդական գործիքների իրենց մասնակցությունն են բերել անգամ թուրքիայում արևելյան երաժշտա-տեսական գրութների բյուրեղացման գործիքն: Այսպես, վերև հիշատակված թամբուրի Հարութինից (Ժ. Դ. դ.) մեզ հասել է

<sup>13</sup> Սուլթան Մաչիդի (1839—1861) պալատական աշուղ Քեշիշ-օզլին, որին հիշատակում է Գ. Անդյան (տե՛ս «Աշուղները և նրանց արվեստը», Երևան, 1944, էջ 16), որպես հայ բացառություն չի կազմում:

<sup>14</sup> Այս շնորհալի երաժիշտը ծառայել է նաև նապիր-Շահի պալատում և զել՝ «Պատմություն Թահմազ Ղուլու» աշխատությունը հայատա տաճկերենով, որ մի բանի անգամ տպագրվել է տարբեր լեզուներով (այդ թվում և արդի թուրքերենով): Այս հայկական հրատարակությունը տե՛ս Հայկական Ջեռագրատուն (Մատենադարան), Գիտական նյութերի ծովովածու, էջ 1, Երևան, 1941, էջ 101—128:

<sup>15</sup> Տ. Ն. Հիսարյան Ա., «Պատմություն հայ ձայնագրության, և կենսագրությունները երաժշտա ազգայնոց», Կ. Պոլիս, 1914, էջ 38—42, 46—53, 170—177:

<sup>16</sup> Տ. Ն. «Oriental Sharky» վերնագրված մատյանը, Երևանի գրականության և արվեստի թանգարանում, Հակոբոս Այվազյանի արխիվում:

նակ արևելյան երաժշտության մի «Զեռնարկ»<sup>17</sup>, նորից հայտառը տաճկերենով։ Արևելյան երաժշտության տեսականին քաջ գիտակ է եղել կեսարացի Գրիգոր Դպիր Գապասաքալյանը, որ երևում է նրա երաժշտատեսական բոլոր գործերից<sup>18</sup>։ Արևելյան ձայնեղանակների՝ մուղամների մասին հայտառը տաճկերենով գրված երաժշտա-տեսական մի աշխատություն ունեցել է էվերեկցի կարապետ Մառուկեան (1805—1875) երաժշտագետ վարդապետը և, ինչպես դա վկայում է Տրդատ եպիսկոպոս Պալյանը<sup>19</sup>։ Բազմամյամատ Համբարձում կիմոնցանը, որը քաջատեղյակ էր նաև թքական երաժշտության տեսության, հայկական ձայնագրության նոր գրությունը ստեղծելուց հետո, ձայնանիշերից ամեն մեկին հատուկ տաճկական անոններ հարմարեցրեց և նորահնար այդ արվեստը տաճկիներին և դասավանդեց, միևնույն ժամանակ ձայնագրելով ու հրատարակելով նրանց «Ճանր» տիպի գանձան բարդ եղանակները<sup>20</sup>։ Եղիա Տնտեսյանը առաջին երաժշտան է, որ տվել է արևելյան, այդ թվում և տաճկական, ու ելուրափական հիմնական ձայնաշարերի համեմատական վերլուծությունը<sup>21</sup>։ Հակոբոս Այվազյանը հեղինակն է նաև արևելյան երաժշտության հիմնալիորեն պատրաստված մեկ «Դասագիրք» աշխատության, որ պահպամ է նրա արխիվում<sup>22</sup>։ Կոմիտաս վարդապետը հայկական գեղջկական երգերը հավաքելուն զուգընթաց, ձայնագրելով կորստից դրկել է նաև թուրքական երգերի ներկայանալի նմուշները<sup>23</sup>։

<sup>17</sup> «Զեռնարկ»-ը մեզ հասել է ԺՈ դարի վերջի մի գրագրով, որ Մաշտոցի անվան մատենադարանում պահպամ է 9340 թվահամարի տակ։

<sup>18</sup> Տե՛ս թեկուզ և «Գրքոյք որ կոչի նուագարան, արտահանեցեալ ի կեսարացի Գապասաքալեան Գրիգոր Դպիր», Կ. Պոլիս, 1794։

<sup>19</sup> Տե՛ս Ալպյանյան Ա., «Պատմություն հայ կեսարիո» (տեղագրական, պատմական և աղքագրական ուսումնասիրություն), Բ, Կահիրե, 1937, էջ 1582 (տողատակ)։

<sup>20</sup> Ծուրեն արենա, «Թարա Համբարձում կիմոնչան և հայ նոտագրության ծագումը», Եզրին, 1915, էջ 17։ Տե՛ս նաև «Տարագ», 1893, № 11։

<sup>21</sup> Տնտեսյան Ե., «Ազգային երաժշտություն», Սիոն, Երևանադեմ, 1867, № 9, էջ 146—148։

<sup>22</sup> Գրականության և արվեստի թանգարան, Հակոբոս Ալվազյանի արխիվ («Դասագիրք»-ը գրված է հայերենով և ունի երկու մաս, ա) եղանակներ, բ) ուսումներ)։

<sup>23</sup> Տե՛ս Առաքի Պ., «Կոմիտաս—собиратель и исследователь армянской народной песни. VII международный конгресс антр. и этн. наук», Москва, август 1964 г., стр. 4—5.

Ահա թե ինչպիսի՝ ծառայություններ են մատուցել մեր հայրերը մեր ջարդարարներին։ Այո՛, արևմտահայերի երաժշտական գործունեությունը նույնպես, ուղղակի կամ անուղղակիորեն նպաստում էր նաև առասարակ ողջ Թուրքիո երաժշտական մշակութի զարգացմանը, զարգացում, որ դեռևս ԺԹ դարի երկրորդ կեսին իսկ նշանակալի մի հանգրվանի համաներ անշուշտ, եթե հիշյալ գործունեությունը ընթանար գեթ մի քիչ ավելի բնականոն պայմաններում<sup>24</sup>։ Ընդհակառակը, սակայն, և կարծես բարիքը հենց շարիքով հատուցելու հաստատ դիտավորությամբ, Թուրքիայում տիրող ընդհանուր տգիտության, հետամնացության, մոլեռանդ ալլամերժության ու ահավոր խավարամտության առանց այդ էլ հեղձուցիչ մթնոլորտը ի վերջո հայցավ ու դիվայնորեն գործադիր տվեց մեծ եղենը, որից, ի դեպ, ողջ երկրին ու նրա տարերեա-ին էլ բաժին մնաց տնտեսական, քաղաքական, մշակութային ու բարոյական սնանկության ներկայիս ողորմելի վիճակը։ Բայց մենք գիտակցնք մեր երաժշտական կորուստները։ Դրան խորապես հասնելու լավագույն միջոցը կիներ պարզել, թե երաժշտականորեն (երաժշտա-ազգագրական ու երաժշտա-կրթական տեսակետներից) ի՞նչ էին ներկայացնում Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի մեր բաղադրներն ու գուղերը, ինչպես նաև Փոքր Ասիայի հայկական գաղղութները, մինչև համաշխարհային առաջին պատերազմը։ Բայց խնդիրն էլ հենց այն է, որ դրա լրիվ ու կենդանի համայնապատեկը վերստեղծելը, Վանից ու Կարինից մինչև Պոլիս ու Արդիանապոլիս, և Սսից ու Աղանայից մինչև Սամսոն և Տրապիզոն, անհնարինի է պարզապես։ Հետագայում գուցե հնարավոր լինի այդ բանն անել ամենաընդհանուր գծերով։ Ստորև մենք կիրածենք տալ մեզ հետաքրքրող երաժշտական միջավայրի մանրանկար մեկ պատկերը միայն, այն էլ թերի ու պակասավորութեկուզ և միայն այն պատճառով, որ մեր աղբյուրները, հիմնականում, հուշամատյաններն են, ինչպես ասցինք, իսկ դրանցում մեր նյութին վերաբերող հարցերի միացցությունը կարևորություն է ստանում և լուսաբանվում տարրեր շափով ու մակարդակով, շխոսելով գրեթե ընդհանուր մեզ թերության մասին, որով հուշամատյանների շախաթիւն մեծամասնության մեջ ժողովրդական բանահուսության վերաբերող ազգագրական նյութերը բերվում են առանց մեղեդիների ձայնագրության։

<sup>24</sup> Ինչպես արդարացիորեն դիտել է տակի Ալ. Շահվերդյանը. Տե՛ս նրա «Հայ երաժշտության ակնարկներ 19—20-րդ դ. դ.», Երևան, 1959, էջ 293—294։

\*\*

Անցնելով հիշատակված մանրանկար սխեմայի պատկերմանը, նախ մոտենանք պատական Հայաստանի շրջաններին, սկսելով թեկտեղից, ասենք՝ Ուրֆայից:

Զափազանց քիչ բան գիտենք մենք այժմ՝ Ուրֆայի հերոս Հայության երգաստեղության մասին։ Մեզ համար հետաքրքրական անշուշտ Ա. Սահակյանի առաջ բերած իրային, Հարսանեկան և մանկական մի քաղաքի երգերի խոսքերը, առավել ևս, «... Հավաարար խաչակիրներու շրջանն մնացած», Ալզիս ոչ գոյ ապաէն, բացի որդոց քաջենէն զամաստ Հայրենասիրությամբ տոգորված նրգի գրական տեքստը, թայց սրանք փշրանքներ են միայն, որոնք երաժշտապագրական առումով մի գեճք ու կերպարանք չեն ուրվագծում գեռես, ինչպես դա հաստատում է ինքը Սահակյանն էլ, նշելով. «... այս քաղաքի հայության ժողովրդական բանահյությունը շատ ավելի մեծ արժեքով պիտի ներկայանար մեղ, եթե տարիներ առաջ քուն իսկ Ուրֆայի մեջ հավաքված ըլլային անոնք»<sup>25</sup>, Որոշ տեղեկություններ կան Ուրֆայի հայ ճանաշված նվազածուների մասին։ Ուշադրության արժանի է մանավանդ հայնվագածուների և ասորի երգիների համագործակցության երևությը, ինչպես դա արտահայտվել է, «Կարապետի և Ջրջոյի նվագախմբի» մեջ, որում ջութակի, քանոնի, դափի և դոչոլի վրա նվագողները հայեր են, իսկ «ըսողները»՝ «Ասորի Ջրջո» և «Ջուլրի Մահո»<sup>26</sup>, Գալով Ուրֆայի հայության մեջ ժամանակին տարված երաժշտական գործին, սա կարող ենք ասել, որ այստեղ նույնպես դպրոցներում եռանդով դասավանդում էին գեթ մեր ազգային-հայրենասիրական երգերը, դատելով թեկուլ և՝ «Երբ ալեկոծ ծովուն վրա» երգի հիշատակությունից<sup>27</sup>. մինչ եկեղեցում Հարատեսում ու ծաղկում էին հայոց հոգեկոր երաժշտության հինավորց ավանդություները։ Մանավանդ երբ ի նկատի ենք առնում, որ տեղահանությունից առաջ Ուրֆայի առաջնորդը եղել է Արտավագդ Գալենդերյան երաժշտը վարդապետը, այստեղ էլ հնեց ընկնելով նահատակի մահով։ «Արտավագդ ծայրագույն վարդապետ Գալենդերյան, բացի իր կրոնական և գրական արժանիքներն՝ եռանդուն հետևող մը

եղած է երաժշտության»— գրում է Ե. Մըսրլյանը՝ «Նանած է 1876-ին, Բրուսայի Յենիցն գյուղը, իր նախնական կրթությունը ստանալի վերջ մտած է Արմաշի դպրեվանքը, ուր իր ուշիմության շնորհիվ շուտով ստացած է կրոնականի աստիճանները և վարդապետ ձեռնադրվելով երիտասարդ տարիքի մեջ, վարած է առաջնորդական տեղապահին մեջ իր ուսանողության շրջանին մասնավոր հակում ցուց տված է երաժշտության, աշակերտած է Համբարձում Զերյանի ... դպրեվանքին ելլեւն վերջ ալ չէ մարած իր մեջ երաժշտության սերը. Պոլսու մեջ կարճ ատեն մը Գ. Մեհերյանի աշակերտելի հետո՝ ինքնօգնությամբ մշակած է իր երաժշտական հատկությունը և հետզհետե արտադրած է երաժշտական գործեր։ Հրատարակած է «Սարսուներ» ծայնագրությունը<sup>28</sup>, իսկ Գ. Մյուրմենյանն ավելացնում է. «... Արտավագդ վարդապետ տեղահանության նախօրյակին Ուրֆայի առաջնորդն էր, 915 հունիսի 28-ին ոստիկաններու կողմե առաջնորդարանին մեջ ձերբակալվելով գեպի Տիգրանակերտ զրկվեցավ ու ճամբան «Շեյթան-դերսի»-ի մեջ նահատակվեցավ»<sup>29</sup>:

Երաժշտա-ազգագրական առումով գուցե մի քիչ ավելի գիտենք Տիգրանակերտի հայության մասին։ «Ամիգայի հայոց ընտանեկան կյանքին ամեննեն խրախճալի և ամենն ուրախառիթ մասը կկազմե ամուսնությունն՝ որուն յուրաքանչյուր աստիճանն առիթ մը կուտա հավաքում»<sup>30</sup>, — տեղեկացնում է Տ. Մկունդի եվ Հարսանեկան երգերի նրա մեջը բերած նմուշների խոսքերին ծանոթանալով իմանում ենք, որ Տիգրանակերտի հայությունը երգելիս է եղել, նախ հայերեն բարբառով երգելու սովորությունը ավելի կանայք են պահպանելի<sup>31</sup>, քան տղամարդիկ, որ արտաքին աշխարհի հետ շփման մեջ լինելով հանապաղ, շատ են ենթարկվել տիրող պայմաններին։ «Ալրերուն նվագարաններն, — վկայում է նույն հեղինակը, խոսելով տղամարդկանց խնչութեների մասին, — չորս, երբեմն ալ հինգ կտորներե կրաղկանան. դաֆ, քանուն, քամանի,

<sup>25</sup> Անհակյան Ա., «Դյուցազնական Ուրֆան և իր հայությունները», Թեյրութ, 1955, էջ 693։

<sup>26</sup> Անդ, էջ 632 (այստեղ տե՛ս նաև Հիշուալ նվագախմբի նկարը)։

<sup>27</sup> Անդ, էջ 975։

<sup>28</sup>Տե՛ս «Գանձարան Հայկական երգերու», Դ գիրք, Կահիրե, (Ա. Թ.), էջ 525։

<sup>29</sup> Սյուրմենյան Գ., «Երգնեկա», Կահիրե, 1947, էջ 156։

<sup>30</sup> Մկունդ Տ., «Ամիգայի արձագանքներ», Նյու-Ջերի, 1950, էջ 400։

<sup>31</sup> Անդ, էջ 402, 409, 410, 418։

մաշա և լրդրտմա: Մասնավոր խաղ ըսող մը կհրավիրվի երգերուն առաջնորդելու համար ... նվազածուներն կակսին հասարակ եղանակներ նվագել երբ հրավիրյալներ տակավին առօրյա նյութերու վրա կիսոսակցին: Նախ՝ գեղընդի կը նեն, ապա՝ քաքսիմ-փեշրով, երեք կամ չորս տարբեր եղանակներով, որմե ետք գարպետ երգիւր կակսի փափուկ եղանակով մեներգ մը դիվան, ապա անոր հարմար խմբերգ, խմբերգին նվազածուներն կրնկերանան վարպետին և հրավիրյալներեն ամեն անոնք որ երգելու ձայն կամ փափագ ունին»<sup>32</sup>: Բայց սրանից չպիտի հետևցնել, թե տղամարդիկ միշտ և անպայման թուրքերեն են երգել, և առհասարակ հայերեն-թուրքերենի վերորերյալ բաժանումը չպիտի հասկանալ ուղղագործն: Որովհետև, մի կողմից, կանանց երգած Համբարձման «Վիճկի խաղեր»-ի մեջ ևս եղել են թուրքերենով հորինվածներ<sup>33</sup>, և, մյուս կողմից, տղամարդիկ նույնական երգել են նաև հայերեն, ըստ որում, անկախ այն բանից, թե երգի կամ մեղեղի տվյալ տեսակը ընդհանուր արևելյան կամ թրքական ինչպիսի նոր անուն է ստացած եղել, ասենք, նույն ուշ միջնադարում (ինչպես որ նրանք նաև հայկական երաժշտություն էին նվազում իրենց երաժշտական հինավուրց գործիքների վրա, անկախ այդ գործիքների պատմականութեն նորամուտ թրքական կամ արարական անուններից): «Վերջապես տուն երթալու ատենը կուգա, — կարդում ենք տղամարդիկանց նույն իննույթների մասին, — ... այս անգամ նվազածուներ մայա կերգեն. այս եղանակին համար տեղական (իմա՞ հայերեն) բարբառով գեղեցիկ հորինված համարներն կերպվին. — «... Բաղն ի՞նչ է, բաղշան ի՞նչ է, ազդիկ քու սեղան ի՞նչ է» և այլն: Եվ դեռ, նախքան այդ էլ, նշանավոր սարան են անելիս եղել, հետեւյալ շահեկան վկայության համաձայն. «Առավոտյան դեմ, լուսարացին մոտ; բակը կելնեն, եթե օդը նպաստավոր է, սարան ընելու համար. ասոր եղանակները մի քիչ ճողուն են, սակայն երգեցութիւններն բոլորն ալ սիրահարական են. երբեմն-երբեմն ազգային երգ մ'ալ կերգեն»<sup>34</sup>: Աշուղական, հոգեկոր և նույնիսկ ազգային երգի ոլորտներում, ամիդացի հայերի կյանքում, երկի մինչև վերջ էլ գերիշխող են եղել անցած հարյուրամյակին վերաբերող արժեքները: Քանի որ մինչև այժմ էլ հիշատակվում են, գլխավորապես աշուղական պատմության մեջ, աշուղ Օհան Շիրինն ու նրա թուրքերեն երգերը, եկեղեցական երգաստեղծության զարգացմանը

սատարած էքմեքջյան Մկրտիչ վարժապետն ու նրա տաղերը և պարոցներում 1875-ական թվականներից տարածված՝ «Հայութեանիքն ողբի ձայներ կը լսվին» ազգային երգը, Մ. Փորթուգալյանի խոսքերով<sup>35</sup>:

Ազգագրապես Տիգրանակերտի հետ կապված է եղել Հայնին, որտեղի հայության կյանքում տարածված երգերի (օրոր, հարսանեկան, պարերգ և այլն) մի մասը, ըստ երևութիւն, հենց Տիգրանակերտից էլ անցել է յայտեղ, ինչպես դա հասկացվում է Բ. Ժամկոչյանի որոշակի մեկ ակնարկից<sup>36</sup>, և նախապես ըսինք, թե երկրագործ ըլլալով շատ երգ ունեցած չենք, — բացարձում է նա, — բայց ունեցած ենք լավ երգողներ՝ Ֆերմաննեց Տիգրանը, Ամո Տոնոյենց ծասին, Թումոյենց Կարպատը, Մանաստուրենց Պողոսն ու Մանուկը (Հոչակավոր), Դրենցի Փոռթոյենց Տրփիոն (Հոչակավոր), Ստեփան Ներսեսյան...»<sup>37</sup>: Հայնիի կարեռ մեկ առանձնահատկությունն այն է, որ այստեղ ապրել են քրդախոս հայեր, իրենց քրդակուու երգերով, որոնք, ինչպես և Հայնիի հայերեն մյուս երգերը, թ. Ժամկոչյանը բերում է իրենց մեղեղիների ձայնագործություններով հանդերձ, օգտվելով Համբարձում Բերերյանի ծառայություններից<sup>38</sup>:

Մոտենալով հայոց ցեղային հատկությունների պահպանման տեսակետից մեր ամենահոգեարուստ շրջաններին (Ծոփք, Տարոն, Վասպուրական, Բարձր Հայք), անհրաժեշտ է նախորոք նշել, որ մենք այդ շրջաններին ևս անդրադառնալու ենք, նախընթաց օրինակով, հիմնականում, ըստ համապատասխան հուշամատյանների (բայց անշուշտա ի մտի ունենալով Գ. Վարդապետ Սրվանձտյանցի, Զ. Զանիկյանի, Հ. Աշեմյանի և այլոց շնորհիվ ստեղծված ազգագրական գրականությունը): Որովհետև նախ՝ մեզ, տվյալ գեպօւմ, լոկ ազգագրությունը չէ, որ հետաքրքրում է (ինչքան էլ այդ ներկայացնի այստեղ արծարծվող հարցերից ամենածանրակշիռը), հետո՝ հուշամատյաններում, համենայն դեպս, այս կամ այն շափով, հաշվի առնված են ազգագրական հին նյութերը ևս, և, վերջապես՝ հիշալ նյութերը իրենք էլ, հենց ամբողջությամբ վերցված, շատ անբավարար են, շնուսելով երաժշտական նյութերի մասին:

<sup>32</sup> Մկունդ Տ., «Ամիդարի արձադանքներ», էջ 415.

<sup>33</sup> Անդ, էջ 422—423.

<sup>34</sup> Անդ, էջ 416.

<sup>35</sup> Անդ, էջիր, համապատասխանարար, 331—337 (ըստ բոլոր տվյալների, Օհան Շիրինը հորինել է նաև հայերեն, ան՝ էջ 413, «Թեղնիս Շիրինի», Հայերենով), 322—325 և 385—386:

<sup>36</sup> Ժամկոչյան Բ., «Հայութ», Բեյրութ, 1951, էջ 105:

<sup>37</sup> Անդ:

<sup>38</sup> Անդ, էջ 105—130:

կերչիններս շափազանց թիշ են, գոնս դատե-  
ռով մինչև այժմ հրատարակված ժողովա-  
ռուներից: Նրանցում արտահայտված չեն  
հայաստանի, ինչպես վերոհիշյալ, այնպես  
ու մյուս ազգագրական շրջանները, իրենց  
գիրք ուրվագծորեն ամբողջական գեմքով: Ա-  
յլին, նրանցում լիարժեք կերպով արտա-  
հայտված չեն անգամ հիշյալ շրջաններից մի  
քանի համար խիստ հատկորոշ, և մեր ժո-  
ղովրդական երգաստեղծության ամենաար-  
ժեքովոր բաժինները կազմող ժանրերը: Այս-  
պես, լոկ փշրանքներ են ձայնագրված Ակնա-  
նշանավոր անտունիներից (դուրս թողնելով  
թյուրիմացությամբ միայն անտունի անվան-  
ված Կոմիտասի հանրահայտ «Անտունի»-ն,  
որ զարիբի երգ է)<sup>39</sup>, Վանա և Կարնո պարա-  
յին հոչակված խմբերից ու գործիքային  
նվազներից, և կամ Տարոնում ստեղծված  
հայկական դյուցազնա-վիպական գովված  
երգերից: Աչա թե ինչո՞ւ վերն անվանված  
ազգագրական թիշ թե շատ հայտնի մի քանի  
շրջանները հատուկ կերպով չենք բաժանում  
մյուսներից: Եվ աչա թե ինչո՞ւ, Հայնից  
հետո խոսքը մասնավորելով, ասենք, Տարո-  
նի շուրջ, ուշադրություն պիտի զարծնել ոչ  
թե ազգագրական ու երաժշտա-ազգագրա-  
կան տեսակետից այս թիշ արվածի, այլ հու-  
շամատյաններից մեկում հանդիպող հե-  
տևյալ ու դրա նման բնորոշումների վրա:  
«Տարոնի աշխարհը հնագարյան օրորան մը  
եղած է հեթանոսական մեջյաններու, կրո-  
նական ծեսերու, աղոթքներու, նավասար-  
դյան հանդեսներու և երգերու, ինչպես նաև  
դյուցազնավեճերու և առասպելներու: Ան-  
ցյալով հարուստ այս կեդրոնը հայկական  
նկարագրի ամենն ցայտուն և ամենն ու-  
շագրավ արարքներու թատերաբեմը եղած է  
զարերով: Ամենն շեշտված հատկությունը  
գինվորական և ըմբոստ նկարագրին է, որ  
կարմիր թելի պես կանցնի հին և նոր Տարո-  
նի պատմության էջերեն: Ու աղկե՝ դյու-  
ցազնավեճերու հյուսքը անոր դյուցազն զա-  
վակներու անունին և արարքներուն շուրջ:  
Մեհենական պատերազմներեն հետո, լույսի  
ու գրականության մեծագործությունները...  
Մամիկոնյան տան դյուցազնական խոյանք-  
ները (Արտավազդ, Վասակ, Մանվել, Վահան,  
Մուշեղ, Վարդան սպարապետներու երգերը),  
ու ապա՝ Սահնասար, Մհեր, Դավիթ և Փոքր  
Մհեր աղգային դյուցազնավեճի ստեղծա-  
գործությունը... Տարոն քաջագործության և  
ազգային բաղանքներու օրորան մը եղած է,

ու չէր կրնար ըլլլալ նակ երգի ու դյուցազ-  
ներգության կեղոն մը»<sup>40</sup>: Սակայն միայն  
դյուցազներգության՝ Տարոնի ժողովրդական  
րանահյուսության «ամենեն հարուստ»<sup>41</sup>  
բնագավառում չէ, որ շհասցրեց պետք եղած  
հունձը կատարել հայ երաժշտական ազգա-  
գրությունը: «Երկրորդ հատկությունը նույն-  
պես ակնրախ է Տարոնի և անոր կյանքին  
մեջ», — կարդում ենք նույն տեղում: — «Տա-  
րոնի հայ ժողովուրդը կենսունակ է և կեն-  
սուրախ, հակառակ իր փոթորկալի կյանքին:  
Եթե հեթանոսական նավասարդյան տոնները  
վերջ գտնեն, բրիստոնեական ուխտագնացու-  
թյունները նավասարդյան տոններու պես  
խրախճանքի կվերածե, կերգե ու կպարէ»<sup>42</sup>:  
Այնուհետև՝ «Տարոնի ժողովուրդը լրջության  
և հերոսականին հետ սրամտությամբ օժտը-  
ված է: Կատարել և սրամտությունը կսիրե և  
կարտահայտե պատկերալից ձեւերով, երբեմն  
սրովված, սինբոլիկ կարճ արտահայտու-  
թյամբ»<sup>43</sup>: Հավաքական ներաշխարհի այս  
հատկությունները բազմակողմանիորեն ար-  
տահայտող երգերը նույնպես շհասցրեց  
հայտնաբերել ու ձայնագրել մեր երաժշտա-  
կան ազգագրությունը, մի կողմ թողնելով  
հետևյալ հարցերի մեջ միրճվելու պարտքը:  
«Տարոնի ամբողջ աշխարհը երբ միասին  
կառնենք՝ անոր բանահյուսությունը բարքա-  
ռային երկու ճյուղի կրածնվի: Մշո դաշտ,  
թուլանում, Խոնու, Վարդո և Սասուն Արև-  
մբույան Տարոնը կկազմեն և զուտ Տարոնի  
բարբառով կստեղծագործեն, ավելի նուրբ և  
ավելի պատկերալից: Ծոփաց աշխարհին  
սահմանակից ըլլլալով և հին դարերեն սկսած  
հովն-բյուզանդական կիսագունդին պատ-  
կանելով հելլենական արվեստի հավասա-  
րակշռությամբ կստեղծագործե: Խսկ Ախլաթ,  
Բիթլիս, Խիզան՝ Վանի բարբառի խառնուրդն  
ունին, մնալով անկախ և ինքնահատուկ  
... Մոկաց և Սպարկերտի երգերեն շատերը  
Տարոնի երգերն են, Մոկաց բարբառին վե-  
րածված»<sup>44</sup>:

Տարոնի տեղահանության անմիջապես նա-  
խորոշող շրջանի հայ աշուղների մասին, ցա-  
վոք, շատ թիշ բան է գրված ընդհանրապես,  
մինչեն ավելի քան պարզ է, որ «Մշո Սուլ-  
թան Սուրբ Կարապետը» բովանդակ Հայաս-  
տանի աշուղների պաշտպանն ու ռմուրա-  
գատուր»-ը լինելով, և բոլոր թիշ թե շատ  
անվանի աշուղներին որպես հատուկ ուխտա-

40 Ա. Կ., «Պատմություն Տարոնի աշխարհի», Թի-  
րութ, 1957, էջ 476:

41 Անդ, էջ 512:

42 Անդ, էջ 476:

43 Անդ, էջ 477:

44 Անդ:

39 Այդ ժաման տե՛ս Աքեղլան Մ., «Գուսանական ժո-  
ղովրդական տաղեր, հայրեններ և անտունիներ», Երևան,  
1940, էջ 16 (տողատակ):

վորներ ընդունած լինելով, իր սեփական աշխարհում ևս աշուղական արվեստի բազմահազար սիրահարների հետ նաև կայլուն ներկայացուցիչներ հովանավորած պիտի լիներ մինչև վերջ<sup>45</sup>. ինչպես արդեն ընդհանուր առմամբ հայտնի է, թե միայն Ս. Կարապետի վանքի անմիջական շրջապատում եղել են մեկից ավելի տեղացի աշուղներ<sup>46</sup>. Նրանց կանքի ուստեղծագործության մասին տեղեկություններ բնավ չունենք, այլ քաջ գիտենք Մշու գյուղերից հոչակավոր աշուղ հերոս Երմոգին, որ նաև Թագավոր եկեղեցու դպիրն էր. հետո Պոլսում երգեց Կում-Կափովի և Բերայի եկեղեցիներում ևս, Ղալաթիայի եկեղեցու դպրությունը ստանձնեց և միևնույն ժամանակ աննման ռազըգո-ի համբավը վայելեց. 1915-ին գավառացի ուրիշ հայերի հետ աքսորվեց Անադոլու, և ողջ մնաց իր նշանավոր «Թուրքիա-ների շնորհիվ, որոնք կախարդեցին մարդասպաններին իսկ. հասավ Մուշ ու տեսավ իր ավերված գյուղն ու համագյուղացիների անթաղ դիակները. կեղծ ուրացության դիմեց՝ ժամանակ շահելու և մտածելու համար. և մի օր էլ «ՊԺԽային մեքենա»-յով պատճեց նույն գյուղի (մզկիթում հավաքված) բոլոր իսլամներին, լուծելով գաղանորեն խողխողված իր անմեղ համագյուղացիների արդար վրեժը, և ինքն էլ մարտիրոսացավ<sup>47</sup>. Տարոնի ժողովրդական թե աշուղական երգ-երաժշտության համատեղ փայլատակումները տեղի են ունեցել առհասարակ ուխտագնացությունների ժամանակ դեպի Բաղեշի, Մուշի և Սասոնի հնադարյան վանքերը, և նամանավանդ դեպի նույն Ս. Կարապետի վանքը: «Հին ժամանակներեն Ս. Կարապետ հայուն սիրած ուխտավայրերեն եղած է, — գրում է Հ. Հ. Ոսկյանը: — «Հուն կհամախմբվեին հեռավոր գավառներեն և մերձավոր վայրերեն ուխտավորներ, մանավանդ Վարդավառի և Վերափոխութիւնունը հերթուն: Հորինված էին զանազան տաղեր ու երգեր, որոնք անոնց (իմաս ուխտավորների) բերանն էին, նաև իրենց տան մեջ ու ճամբուն վրա: ... Վանքին մեջ ու շրջակայքը

տեղի կունենային եկեղեցական և աշխարհիկ հանդեսներ և զվարձություններ»<sup>48</sup>: Ավելորդ է ասել, թե ինչպիսի արժեքներ մնացած պիտի լինեին, մինչև մեր օրերն իսկ, Ս. Կարապետի (փաստորեն պատմական Գլակա) վանքի նման հնագույն մի ուխտատեղիի ու նրա շրջակայքի ավանդապահ ժողովրդի հիշողության մեջ, նույնիսկ հեթանոսական ժամանակներից հարատեսած<sup>49</sup>, եթե տեղի չունենար անդարմաննելին:

Տարոնում հնագույն ավանդություններ պահպանված պիտի լինեին նաև եկեղեցական երաժշտության բնագավառում: «Ս. Կարապետի մեջ հինեն իվեր կար ժառանգավորաց վարժարանը», — հաստատում են Սարգիս և Միսակ Բդեյանները, նշելով, որ նույնպիսի «ժառանգավորաց»-ներ ունեին Մուշի Առաքելոց, Ս. Հովհաննես ու մի քանի ուրիշ վանքերն ևս<sup>50</sup>: Նաև հաշվի պետք է առնել, թե Մուշի հայկական եկեղեցիներին կից հինգ ծաղկոց-վարժարանները այնպիսին էին, որ «իրենց աշակերտներուն կորվեցնեին՝ քերական, հեգարան, սաղմոս, ժամագիր [և] շարական»<sup>51</sup>: Այս վկայությունը առանց հատուկ քաշշանկի կարելի է տարածել Բաղեշի ու Սասոնի ծաղկոց-վարժարանների վրա ևս: Մուշի վարժարաններում դասավանդած վարժապետներից, իրու սիրված երգիշ-երաժիշտներ, հիշատակվում են Գասոյենց Մեծ Հակոբ վարժապետն ու Ստեփան վարժապետ Տեր-Բարսամյանը<sup>52</sup>: Գալով առհասարակ երաժշտա-կրթական գործի տեսակետից Տարոնում մասնավոր ժառանգություններ մատուցած հաստատություններին, այստեղ անհրաժեշտ է հիշատակել Միացյալ ընկերության վարժարանը Մուշի մեջ, և Ամերիկան կուեզը Բաղեշում: Առաջինը փայլել է հատկապես Ս. Սարյանի տեսչության օրոք, որն անձամբ մասնակցել է դպրոցում տարվող երաժշտա-կրթական աշխատանքներին: «Սարյան ինք դաս կու տար եկեղեցական հանդիսավոր օրերու երգերը ինք

<sup>45</sup> Անդրեան Հ., «Տարոն-Տուրուբերանի վանքերը», Վեհենա, 1953, էջ 241—243.

<sup>46</sup> Հիշենք, թե այս տեսակետից ինչպիսի հորիզոններ է բացել մեր առաջ Ս. Կարապետի «մեծ ուխտագության» ժամանակ հանդիսավոր կերպով երգված և Կոմիտասի կողմից ձայնագրված, թեկուզ և միայն, Մուշի մշանավոր «Շորորա-ը (պարերգ). տե՛ս Զովանան Ա., «Հայ երաժշտության և բանաստեղծության մասին» (բանախոսություն), «Անահիտ», Փարիզ, 1907, № 1, էջ 27:

<sup>47</sup> Բիշեան Ս. և Մ., «Հարազատ պատմություն Տարոն», Կահիրե, 1962, էջ 14:

<sup>48</sup> Անդրեան էջ 11:

<sup>49</sup> Անդրեան էջ 12:

<sup>45</sup> Գիտուելով Մշու աշուղական հին, ամենը, Բաղդասարից, Մատուրից և Մատուր-օղիկից եկող ավանդությունների մասին (տե՛ս Ալոեյան Գ., «Հայ աշուղներ», Ալեքսանդրոսովու, 1892, էջ 19 և 52), որոնք նույնական իրենց նպաստը բերած կլինեին նորագույն աշուղների կազմագործանը:

<sup>46</sup> Մինաս Գերազ, «Յա Սուրբ Կարապետ», տե՛ս «Դիթավական», Գիրը Ա., խմբագրեց Հ. Մ. Պոտույան, Բուրբել, 1928, էջ 44:

<sup>47</sup> Անդրեան էջ 44—52:

Դիլեթրաշխան նիկողոսի հետ՝ առանց շահիկ հազնելով՝ երբեմն կմասնակցեր եկեղեցական երգերուն, կավ կերպեր ... Դպրոցաւան երգերն ալ թերթերյանի հետ դաս կուտար. Թե հայրենյաց պսակագիր, Դու զո՞վ մանրես, Երրոր բացվին, Ո՞րն է աշխարհ. այստան, Ոչ եղբարք, Ազատն Աստված, Ազնիվ ընկեր, Ընցավ տարին, Առավոտան աղցր և անուշ, Ի բյուր ձայնից, Տեր Կեցո, Արիք Հայկազոնք, Բամ փորոտան, Ալոն լանֆան»<sup>54</sup>: Ի միջի այլոց, այս վերջին երգի՝ Եղափոխական վերստեղծի պայքարի խորբանիշը հանդիսացող նշանավոր «Մարտելող»-ի տարածված լինելը հայկական որշանակներում՝ շատ բան է հուշում այդ հասկրական (հակավատատիրական, հակամիթապետական և հակարռնատիրական, այլ ոչ թե նեղ-ազգային, շուլինիստական)

տրամադրությունների մասին: Շարունակելով վերսի վկայությունը, պետք է արձանագրել նաև, որ Մուշում «խմբական երգեցողությունը դպրոցներու մեջ Սարըյանի օրով գոյություն ունեցավ»<sup>55</sup>: Ինչ վերաբերում է թաղեշի Ամերիկյան կոլեջին<sup>56</sup>, նրա մասին մանրամասն տեղեկություններ չկարողացանք ձեռք բերել, այլ, դատելով առհասարակ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Անադոլիայի նույն կոլեջների գործունեությունից, գեթ ընդհանուր ձեռվ կարող ենք ասել, թե թաղեշի այս կոլեջը նույնպես, ջութակի և թավշութակի, դաշնամուրի ու երգեհոնի ճաշակը հաղորդած պիտի լիներ իր հայուսանողներին:

(Շարունակելի)

<sup>54</sup> Անդ, էջ 325:

<sup>55</sup> Այդ մասին տե՛ս Սոցիկյան Ս., «Արևմտահայաշխարհ», Ելու-Ցորք, 1947, էջ 130,